Հայաստանի Հանրապետության
պաշտպանության
նախարարության
«Պաշտպանական ազգային
հետազոտական համալսարան»
պետական հիմնարկ

Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային
Ակադեմիայի Արևելագիտության
ինստիտուտ պետական ոչ
առևտրային կազմակերպություն

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան» պետական հիմնարկի և Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության միջև

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան» պետական հիմնարկը (այսուհետ՝ ՊԱՀՀ)՝ ի դեմս համալսարանի պետի պարտականությունների կատարող, գնդապետ Տիգրան Քոչարյանի, ով գործում է ՊԱՀՀ-ի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության՝ (այսուհետ՝ Ինստիտուտ), ի դեմս ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Իսկանդարյանի, ով գործում է Ինստիտուտի կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, կնքեցին սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1.
ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Սույն Հուշագրի նպատակներն են՝

1.1.1. Հարավային Կովկասի, Մերձավոր և Միջին Արևելքի անվտանգային միջավայրի ուսումնասիրման ուղղությամբ հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացումը և գիտակրթական համագործակցության ընդլայնումը,

1.1.2. Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական համակարգերի, զինված ուժերի, արտաքին քաղաքականության հայեցակարգային ուղղությունների, տնտեսության, էթնիկական և կրոնական գործոնների վերաբերյալ ռազմավարական համատեղ ուսումնասիրությունների իրականացումը,

1.1.3. Մերձավոր Արևելքում տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների շահերի և դերակատարման, ՀՀ մերձավորաևելյան քաղաքականության առանցքային ուղղությունների վերաբերյալ համատեղ տեղեկատվա-կավերլուծական աշխատանքների իրականացումը,

1.1.4. Հարավկովկասյան և մերձավորարևելյան տարածաշրջանի առանցքային տարբեր հիմնախնդիրների հետազոտում, գնահատում և դրանց վերաբերյալ գիտավերլուծական միջոցառումների կազմակերպում,

ՀՈԴՎԱԾ 3.
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն ոլորտներում իրականացվող աշխատանքների համար Կողմերը չունեն ֆինանսական պարտավորություններ: Հնարավոր ֆինանսական պարտավորությունները յուրաքանչյուր Կողմ իրականացնում է իր հաշվին,

3.2. Կողմերը հնարավոր են համարում ներգրավել պոտենցիալ ֆինանսական գործընկերներ՝ ներառյալ հիմնադրամները,

3.3. համագործակցության ընթացքում Կողմերը կարող են օգտագործել պետական ու ռազմական գաղտնիքներ չպարունակող գույքը, տեխնիկական և լսարանային հնարավորությունները:

ՀՈԴՎԱԾ 4.
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

4.1. Հուշագիրը չի կարող փոխվել կամ լրացվել միակողմանիորեն:

4.2. Բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն երկկողմ համաձայնությամբ:

4.3. Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ստորագրելով լրացուցիչ համաձայնագրեր, որոնք կլինեն դրա անբաժանելի մասը, պատշաճ կերպով կկատարեն և կստորագրեն Կողմերի լիազորված անձինք:

ՀՈԴՎԱԾ 5.
ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անժամկետ:

5.2. Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) տարի առաջ՝ մյուս կողմին գրավոր ծանուցմամբ:

ՀՈԴՎԱԾ 6.
ՀՈՒՇԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Սույն Հուշագիրը կնքված է հայերենով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն Հուշագիրը կազմվել է « »_____ 2024 թ., Երևան:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ	ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ
Համալսարանի պետի ՊԿ, գնդապետ Տ. Քոչարյան	Ինստիտուտի տնօրենի ԺՊ Գ. Իսկանդարյան
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
Կ.Տ	Կ.Տ
ՀՀ, ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 56/6 , Հեռ. (+37410) 287321, haykakanbanak.am	ՀՀ, ք. Երևան, 0019, Մ. Բաղրամյան պող. 24/4, Հեռ. (+37410) 583382 info@orient.sci.am